**Հրավեր**
**Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու**
**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ նոր վարչական շենքի և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատար» ՓԲԸ պահուստային կարգավարական կենտրոնի կառուցման Շրջակա միջավայրի կառավարման պլանի ստուգաթերթիկների պատրաստում,**
ETNIP-CS-6/2013

Երկիրը՝ **Հայաստան**
Ծրագրի անունը՝ **«Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրի նախապատրաստման դրամաշնորհ**
Դրամաշնորհ՝ TF0166041

Սույն Հետաքրքրության Հայտ Ներկայացնելու Հրավերը հաջորդում է 2013թ.-ի նոյեմբերի 15-ին UN Development Business և www.gnumner.am (www.procurement.am) էլ.կայքերում տեղադրված Գնումների Ընդհանուր ծանուցմանը:

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային Բանկից ստացել է դրամաշնորհ «Էլեկտրահաղորդման ցանցի հուսալիություն» ծրագրի նախապատրաստման ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

Սույն հրավերով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն հրավիրում է բոլոր շահագրգիռ անձանց ներկայացնել մրցույթին մասնակցելու հետաքրքրության հայտեր: Խորհրդատուի ընտրությունը կկատարվի Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված (թարմացված 2014թ. հուլիս) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով («Խորհրդատուների ուղեցույց») սահմանված ընթացակարգերով՝ անհատ խորհրդատուի որակավորման եղանակով:

**Անհատ խորհրդատուի աշխատանքի ծավալը՝**
Պատրաստել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ նոր վարչական շենքի և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատար» ՓԲԸ պահուստային կարգավարական կենտրոնի կառուցման Շրջակա միջավայրի կառավարման պլանի ստուգաթերթիկները:

**Անհատ Խորհրդատուն պետք է ունենա հետևյալ որակավորումը՝**
Առնվազն մագիստրոսի կոչում բնապահպանությունում, ճարտարագիտությունում, երկրաբանությունում կամ այլ սերտորեն կապված ոլորտներում: Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ենթակառուցվածքների և արդյունաբերական/հանքարդյունաբերության ծրագրերում, ներառյալ շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի վրա ազդեցության գնահատման ոլորտում: Փորձ Միջազգային Ֆինանսական Ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերում, ներառյալ փորձառություն Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի համար Բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի պատրաստման ոլորտում: Անգլերեն և հայերեն լեզուների գրավոր և բանավոր սահուն իմացություն:

**Առաջադրանքի տևողությունը՝** 45 **օր /օրացուցային/**:

Շահագրգիռ անձիք իրենց դիմումները՝ ինքնակենսագրական տվյալներով (CV), հայերեն և անգլերեն լեզուներով, առձեռն կամ էլ.փոստի միջոցով, կարող են ներկայացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Անանյանի անունով **մինչև** 2014 **թվականի հոկտեմբերի** 27-ը՝ **ժամը** 17:30 **հետևյալ հասցեով**.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,Զորավար Անդրանիկի 1,
Հեռ: +37410-720010; ֆաքս: +37410-720121; էլ.հասցե: hvenbec@gmail.com;

Լրացուցիչ տեղեկությունների համար, աշխատանքային օրերին ժամը 9⁰⁰ - 17³⁰ զանգահարել +37410 72-02-70, գլխավոր ճարտարագետի տեղակալ Արամ Պետրոսյանին: Էլ. փոստ hvenbec@gmail.com